



**Ստեփանավանի Օրհուս կենտրոնի
կատարած աշխատանքների տարեկան
հաշվետվություն
/փետրվար-նոյեմբեր/
2013թ.**

Գործունեության եզրափակիչ հաշվետվություն

1. Նախարան և ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին,

Կենտրոնի գործունեության ամփոփ նկարագիրը

Ստեփանավանի բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրինու) կենտրոնը 2013թ. իր աշխատանքային գործունեությունը սկսել է փետրվարի 4-ին:

Նշված ժամանակահատվածում ԵԱՀԿ «Համայնքային անվտանգություն» նախաձեռնությունից բխող ծրագրի շրջանակում (որի հիմնական նպատակն է իրականացնել աշխատանքներ ներառելով ոչ միայն շրջակա միջավայրի հետ անմիջական առնչություն ունեցող, այլև սոցիալական, առողջապահական, արտադրական անվտանգության, կրթական ու համայնքային անվտանգությունն անուղղակիորեն խոչընդոտող այլ հարցեր: Հաշվետու ժամանակաշրջանում Ստեփանավանի օրինու կենտրոնը կազմակերպել է բազում սեմինարներ, դասընթացներ, հանդիպումներ, կլոր սեղաններ, հասարակական քննարկումներ ուղղված շրջակա միջավայրի առողջացմանը: Անցկացվել են մոտ չորս տասնյակ միջոցառումներ՝ սեմինար - դասընթացներ հասարակայնության տարբեր տարիքային խմբերի և խավերի ներկայացուցիչների համար, հանդիպումներ ՏԻՄ-երի, հասարակական կազմակերպությունների, ՋԼՄ-ների, հասարակայնության ներկայացուցիչների հետ, հարցումներ են ուղղվել պետական մարմիններին, հարցումների պատասխանների վերաբերյալ տեղեկատվություն և տարաբնույթ խորհրդատվություն է տրամադրվել բնակչությանը : Կենտրոնի համակարգողը մասնակցել է հանրային լսումների , միջազգային հանդիպումների, սեմինարների:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի միջոցառումներին մասնակցել են **426** մարդ :

Կենտրոնի ծառայություններից (գրադարան, ֆիլմոդարան, պատճենահանում,) օգտվել են ևս **192** մարդ,

Հաշվետու տարվա ընթացքում մարզի բնապահպանական խնդիրների լուծման ուղղությամբ կենտրոնը համագործակցել է ԵԱՀԿ, տեղական իշխանությունների, ՋԼՄ-ների , հասարակայնության ներկայացուցիչների, մի շարք հասարակական կազմակերպությունների հետ:

Կենտրոնի կողմից մշտապես իրականացվել է տեղեկատվության տրամադրում և տարածում: Տեղեկատվություն ստանալու հարցումների պատասխանները / Բնապահպանության, նախարարություն, համաձայնարային կենտրոն, ,Արմանիսի ոսկու

բազմամետաղանոց հանքավայրի <Սագամար> ՓԲԸ-ի> ընկերությանը, քաղաքապետին , մարզպետին, բնապահպանության տեսչություն...այ/:

Կենտրոնի իրագործված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը կարելի է ստանալ www.aarhus.am , [Facebook.com`](https://www.facebook.com/stepanavan) համացանցի սոցիալական խմբերում, ECO STEPANAVAN և այլ կայքերի միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի մասնակցությամբ, կենտրոնում և կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվել են մոտ **38** միջոցառում:

Ստորև ներկայացվում է դրանց բաշխումը ըստ հանդիպումների տարատեսակների.

Աղյուսակ I

Անվանումը	Քանակը`	100 %
	38	%
Հասարակական քննարկում	2	5%
կլոր սեղան-քննարկումներ	8	21%
Հանրային լսումներ	2	5 %
Գործնական աշխատանքներ և արձագանքներ / շաբաթօրյակ, ծառատունկ, akcia UNEP /	3	8%
Այցելություններ, աշխատանքային և խորհրդատվական հանդիպումներ	6	15%
Դասընթացներ, սեմինար-քննարկումներ էկոլոգիական միջոցառումներ	6	15%
Շնորհանդես	4	10%
Միջազգային հանդիպումներ, սեմինարներ	5	13%
Փորձագիտական խորհրդի նիստեր	3	8%

Աղյուսակ II

Տարվա ընթացքում կենտրոնի այցելուների ընդհանուր քանակը	426	100%
ՀԿ ներկայացուցիչները	112	26 %
պատանիներն ու երիտասարդներ	88	21%
ԶԼՍ ներկայացուցիչներ	30	6 %
տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների, այլ պետական կառույցների ներկայացուցիչները, գործարարներ	71	17%
Այլ /շահագրգիռ քաղաքացիներ/	135	30 %

Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը

Հաշվետու ժամանակահատվածում կազմել է ...201.... մարդ:

Աղյուսակ III 2013 թ. Կենտրոնի ծառայություններից օգտվել են 201 քաղաքացի					
month	Պատճենահ.	գրադարան	ինտերնետ	ֆիլմոդարան	Խորհրդատվութ.
Հունվար	5	1	2	1	1
փետրվար	8	2	3	2	1
Մարտ	12	2	4	3	1
Ապրիլ	8	3	4	2	1
Մայիս	9	4	3	3	1
Հունիս	8	5	3	2	0
Հուլիս	7	6	4	2	1
Օգոստոս	6	5	3	2	1
Սեպտեմբեր	9	6	4	3	1
Հոկտեմբեր	6	6	4	2	1
Նոյեմբեր	2	1	4	1	1
Ընդամենը՝ 192	80	41	38	23	10

Համագործակցություն ՋԼՄ-ների հետ`

Տարվա ընթացքում մարզի բնապահպանական խնդիրների լուծման ուղղությամբ Ստեփանավանի Օրհուս կենտրոնը համագործակցել ՋԼՄ-ների հետ և տրամադրել հարցազրույցներ և այդ առումով ունեցել է հաջողություններ:

1. Հունվար և փետրվար ամսներին Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգողի կողմից երկու անգամ տեղեկատվություն է տրամադրվել **Արմաշի** հաղորդավար Նունե Ավետիսյանին , Ստեփանավանում Ջորազետի վրա փոքր ՀԵԿ-երի կառուցման հանրության բացասական կարծիքի վերաբերյալ , նաև հարձազրույց են տվել Օրհուս կենտրոնի կամավորները/:

2. Փետրվար և մարտ ամիսներին Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգող Մանյա Մելիքջանյանը և ՀԿ-ների ներկայացուցիչները Ստեփանավանի Օրհուս կենտրոնում , հանրային քննարկման ժամանակ , երկու անգամ հարձազրույց է տրամադրվել **<Կենտրոն> TV** -ի լրագրող Տաթև Դանելյանին, ներկայացվել է Փոքր ՀԵԿ-երի կառուցման վերաբերյալ հանրության բացասական կարծիքը:

3. Մարտ, ապրիլ ամիսներին Օրհուս կենտրոնի համակարգողը հարձազրույց է տվել **<Էկոլուր>ՀԿ**-ի նախագահ Ինգա Ջարաֆյանին` Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքի և փոքր ՀԵԿ-երի վերաբերյալ:

3. Մայիս, հունիս , հուլիս ամիսներին երեք անգամ հարձազրույց է տրվել **<Ժրդովուրդ>** թերթի լրագրող Արմինե Բալայանին, Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքի **<Սազամար> ՓԲԻ**-ի աշխատանքային խաղտումների, Ջորազետի աղտոտման , Արմանիսի դպրոցի բակը թափոնավայր դարձնելու մասին, նշված խնդիրների հանրային քննարկումների վերաբերյալ:

4. Հուլիս ամսին Օրհուս կենտրոնի համակարգող Մանյա Մելիքջանյան հարցազրույց է տվել **<Արմենիա> TV** լրագրող Ժան Գալուստյանին Ջորազետի աղտոտման **<Սազամար> ՓԲԸ**-ի կողմից, Արմանիսի դպրոցի բակում մեծածավալ թունաքիմիկատների կուտակումների վերաբերյալ:

5. Վանաձորի **ՄԻԳ հերուստակենտրոնը** հուլիսի 19-ին մասնակցել է Ստեփանավանի Օրհուս կենտրոնում կազմակերպված հանրային քննարկմանը`Արմանիսի ոսկու բազմամետաղանոց

հանքի շահագործման խախտումների վերաբերյալ: ՄԻԳ հերուստակենտրոնի լրագրող Նարինե Մաթևոսյանը հարձագրույց է վերցրել համակարգող Մանյա Մելիքջանյանից, Օրհուս կենտրոնի կամավորներից, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից՝ Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքավայրի տնօրինության բնապահպանական նորմերի անտեսումների , և Արմանիսի դպրոցի բակում <Սագամար> ՓԲԸ-ի կողմից աղտոտված տարացքի վերաբերյալ:

6.Հուլիսի 20-ին Ստեփանավանի Օրհուս կենտրոնում Վանաձորի **ՄԻԳ հերուստակենտրոնի** հետ համատեղ կազմակերպել է թոք շոուի <Հանքարդյունաբերության վնասների կանխումը Հայաստանում > թեմայով: Թոք շոուին ակտիվ քննարկում տեղի ունեցավ Օրհուս կենտրոնի համակարգողի, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, <ՄԻԳ> հերուստակենտրոնի և <Ժողովուրդ> թերթի լրագրողների մասնակցությամբ:

7.Հուլիսի 22-ին Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգողը, **<ՄԻԳ> հերուստակենտրոնի**, Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքի տնօրինության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ այցելեցին Արմանիսի դպրոցի արդեն մաքրված բակը , որը տեղում նկարահանվեց և համակարգողը հարձագրույց տվեց , վերը նշված հաջողության մասին:

.....այլ

Վերը նշված ռեպորտաժների շնորհիվ տարածվել է տեղեկատվություն հանրության լայն շրջանում և հնարավոր է դարձել լուծել մի շարք բնապահպանական խնդիրներ:

Հաշվետու ժամանակահատվածում Ստեփանավանի Օրհուս կենտրոնում հրավիրվել է թվով 3 փորձագետների խորհրդի նիստ.

- 1.Գարնանային
- 2.Ամառային
- 3.Աշնանային

Փորձագետների խորհուրդը կազմված թվով 10 անդամներից, որոնցից 5-ը հասարակական սեկտորից, 5-ը պետական ծառայողներից: 2013 թվականը փորձագետների խորհրդի կողմից ճանաչվել է որպեսզ համայնքում անվտանգության ապահովման տարի:

Ստեփանավանի Օրհուս կենտրոնի փորձագետների խորհուրդի գործունեության հիմնական ուղղություններ են հանդիսանում .

- 1.Համայնքում հանքարդյունաբերության բնապահպանական խնդիրների լուծումը :
- 2.Համայնքում թափոնների կառավարում:
- 3.Համայնքում ջրային ռեսուրսների վերահսկում
- 4.Համայնքում ապահովել անտառների պահպանություն:

2013թ. Փորձագետների խորհուրդը կողմից պարբերաբար կազմակերպել է Ձորագետի մոնիթորինգ , անտառների մոնիթորինգ , ծառատունկ: Փորձագետների խորհուրդի անդամները ամենօրյա ուշադրության կենտրոնում են պահել Ձորագետը՝ արագ արձագանքելով Արմանիսի հանքի թափոններով գետի աղտոտման դեպքերին: Խորհուրդի անդամները կանգնել են բոլոր այն նախաձեռնությունների կողքին, որոնք ուղղված են շրջակա միջավայրի առողջացմանը:

Նշենք, որ հուլիս ամսին փորձագետների խումբը նկատելով Ձորագետի ջրի հերթական աղտոտվածություն հրատապ քննարկում է կազմակերպել հենց Ձորագետի կամրջի վրա հրավիրելով նաև Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքի <Սագամար> ՓԲԸ-ի նոր տնօրինության ներկայացուցիչներին:Փորձագետների կարծիքով Ձորագետը աղտոտվում էր հանքի կողմից, սակայն հանքի տնօրինությունը պնդեց, որ հավանական է ուրիշ աղտոտիչ է

հատնվել, իսկ Մանյա Մելիքջանյանի համոզմամբ անձրևաջրերը լվացել էին գետի ափի նախկին թափոնները և գետը պղտորվել էր:

Ծրագրի իրագործումն ըստ դրված նպատակների,

ՆՊԱՏԱԿ 1

Համայնքներում կազմակերպում է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Օրհուսի կոնվենցիա) և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի լուսաբանման աշխատանքները՝ պարզաբանելով դրանցով երաշխավորված հասարակայնության իրավունքները:

1.1.1 կատարված գործողություններ,

Համայնքներում արկա է հանրային բնապահպանական իրազեկության պակասը, որը հանդիսանում է նաև հանրային իրազեկության պակասի տարր: Այն մեծապես կապված է սոցիալական վատթար վիճակով, թեև առողջապահական և բնապահպանական խնդիրները սոցիալապես վատ վիճակում գտնվող մարդկանց համար էլ ավելի են կարևորվում, քանի որ նրանց մեծ մասը զբաղված է գյուղատնտեսությամբ և այլ՝ ֆիզիկական աշխատանք պահանջող ճյուղերում, իսկ հիվանդանալու պարագայում կորցնում են աշխատելու հնարավորությունը՝ էլ ավելի խորացնելով իրենց սոցիալական վիճակը:

Այս առումով Ստեփանավանի Օրհուս կենտրոնը մեծ աշխատանք է կատարում, կազմակերպելով սեմինարներ, հանդիպումներ, կլոր սեղաններ հանրության համար, որտեղ հնարավորինս ծանոթացնում է Օրհուսի կոնվենցիայի դրույթներին, նրանց կիրառմանը:

Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգողը 2013 թվականի ընթացքում պարբերաբար հանդիպումներ է կազմակերպել մի շարք համայնքներում՝ այդ թվում **Արմանիս, Գար գառ , Կուրթան, Սվերդլով** համայնքներում , **Ստեփանավանի Ամերիկյան թաղամաս, Անտառային թաղամաս...**, **գյուղատնտեսական քոլեջ, դպրոցներ** .այլ Այցելությունների նպատակը վերը նշված համայնքների բնապահպանական ակտիվիստների հետ հանդիպելն էր, Օրհուսի կոնվենցիայի դրույթների հետ ծանոթացումը, «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին, ակտիվիստներին հետաքրքրող հարցերին պատասխանելը: Բոլոր հանդիպումները ընթացել են ակտիվ մթնոլորտում:

Ձեռք բերված արդյունքներ:

Ակտիվիստները հնարավորության սահմաններում հարազատ բնությունը պահպանելու պատրաստակամություն հայտնեցին, խոստացան կազմակերպել ծառատունկեր և ծառերի խնամք, հանդես գալ դպրոցական և համայնքային կոչերով և բնապահպանական նոր նախաձեռնություններով, որոնք կօգնեն շրջակա միջավայրի պահպանությանը: / Բոլոր

համայնքներում ակտիվիստների կողմից կատարվել են ծառատունկեր և կազմակերպվում է ծառերի խնամք/:

18.03.13թվ. **Ամերիկյան թաղամասում** հանդիպման ժամանակ բնակիչները հայտնեցին իրենց դժգոհությունը հարևան անասնապահական տնտեսության վերաբերյալ, որը պարբերաբար մեծաքանակ գոմաղբ է թափում ուղղակի թաղամասի հարևանությամբ: Բնակիչները հայտնեցին, որ չեն կարողանում բացել լուսամուտները օդափոխության համար, իրենց տներում ապրում են բանտարկյալի նման: Դիմել են Ստեփանավանի հակահամաճարակային կենտրոնի տնօրեն Ս. Սարուխանյանին, սակայն ապարդյուն, եկել է, տեսել ու գնացել, ոչինչ չի փոխվել: Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգող Մ. Մելիքջանյանը հանրության անունից նամակ է հղել Ստեփանավանի քաղաքապետ Ս. Ղարաքեշիշյանին՝ խնդրանքով պարտադրել տնտեսությանը գործել ՀՀ օրենքների շրջանակներում և ապահովել համայնքի անվտանգությունը: Համակարգողը տեղեկացրել է նաև Օրհուսի կոնվենցիայի առաջնային կետի պահանջի մասին, այն է՝ էկոլոգիական խախտումների դեպքում պետական մարմինները գործեն անհապաղ՝ առանց ուշացումների:

Արդյունքում թափված մեծածավալ գոմաղբը տնտեսություն վարողի կողմից տեղափոխվել է և այլևս չի աղտոտվում տարածքը:

11.03.13, 30.04.13.....պարբերաբար Արմանիսում հանդիպումներին բնակիչները բողոքել են, որ ընդերքշահագործող **<Սազամար> ՓԲԸ-ը** աշխատում է չպահպանելով բնապահպանական նորմերը, աղտոտելով շրջակա միջավայրը, վնաս հասցնելով բնությանը, մարդկանց:

22.01.13, 3.02.13, 26.02.13.....անընդհատ բողոքներ Ստեփանավանի հանրության կողմից Ձորագետ գետի աղտոտման վերաբերյալ Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հաքնի **<Սազամար> ՓԲԸ-ի** կողմից:

Ստեփանավանի Օրհուս կենտրոնի կողմից գրություններ են ուղղվել քաղաքապետին, մարզպետին, համաճարագային կենտրոն , բնապահպանական տեսչություն, հանքի տնօրինությանը: Ստեփանավանի Օրհուս կենտրոնը, ամիսներ շարունակ պահանջեց, **<Սազամար> ՓԲԸ-ի** տնօրինությանը աշխատել առանց շրջակա միջավայրի աղտոտման, պահպանելով բնապահպանական նորմերը և մաքրել Արմանիսի դպրոցի բակը հանքաթափոններից, որոնց մեջ լի էր մկնդեղ և ծանր մետաղներ:

Վերջապես, Օրհուս կենտրոնի երկարատև պահանջներից հետո, ս/թ հուլիսին **<Սազամար> ՓԲԸ-**ն կատարեց դպրոցի բակի մաքրումը թունավոր հանքաթափոններից, իսկ 2013-2014 նոր ուսումնական տարվա արթիվ Ստեփանավանի Օրհուս կենտրոնը, **<Սազամար> օՓԲԸ-ի** նոր տնօրինության հետ դպրոցի ուսուցիչների և աշակերտների հետ համատեղ դպրոցի բակում կազմակերպեցին աշնանային ծառատունկ, իսկ ծառերի խնամքի աշխատանքները կատարում են աշակերտները:

Հավելենք, որ **<Սազամար> ՓԲԸ-ի** նոր տնօրինությունը պարտավորվել է Արմանիսի դպրոցի բակում կառուցել երեխաների համար խաղահրապարակ:

ՆՊՍՏԱԿ 2

Հետևում է պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին և դրանց ընդունման վաղ փուլում, հասարակայնության պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով, տարածում է համապատասխան տեղեկատվությունն ու կազմակերպում քննարկումներ (կլոր սեղաններ, բանավեճեր և այլն):

1.1.2 Կատարված գործողություններ,

1. Ստեփանավանի Օրհուս կենտրոնիը հետևում է պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին և դրանց ընդունման վաղ փուլում, հասարակայնության պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով, տարածում է համապատասխան տեղեկատվությունն ու կազմակերպում քննարկումներ: Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգողը գտնում է, որ որոշ դեպքերում պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին և դրանց ընդունման վաղ փուլում, հասարակայնության պատշաճ մասնակցությունը չի ապահովվում վաղ փուլում :

Օրինակ Ձորագետի վրա ՀԵԿ-երի կառուցուման վերաբերյալ հանրային լսումները իրականացվում են 2013 թվականին, մինչդեռ Ձորագետի ափամերձ տարածքները 2008 թվականին աճուրդով վաճառվել են թվականին, իհարկե առանց հանրային քննարկումների: Համակարգողի կարծիքով հասարակական լսումները, Ձորագետի վրա ՀԵԿ-երի կառուցուման վերաբերյալ պետք է կազմակերպվեին վաղ փուլում 2008թ., նախկան հողատարածքի վաճարքը:

2.Ստեփանավանի Օրհուս կենտրոնիը պարզել է, որ Ստեփանավանի և հարակից գյուղերի կենցաղային և արտադրական աղբը տեղական կառավարման մարմինների կողմից արդեն շուրջ 60 տարի թափվում է **Ձորագետի մեջ/կոմունիստական ժամանակներից/**: Դրանով իսկ ոչ միայն անդառնալի վնաս է հասցվում շրջանի զբոսաշրջային վայր հանդիսանալու հնարավորությունը և կայուն զարգացման ռազմավարությունը, այլև խաղտվում են **ՀՀ կողմից ստորագրված կոնվենցիաներ**: Այս խնդրի վառ օրինակ է հանդիսանում Ձորագետի ստորին մասերում, Դեբեդից և ՀՀ-ից դուրս գետի ջրերի օգտագործումը ռոռզման նպատակներով: որը հողային կուլտուրաների հետագա ոչ բավարար լվացման պարագայում առաջացնում է հիվանդություններ: Մեկ այլ օրինակ կարող է հանդիսանալ Դեբեդի ամբողջ երկայնքով պլաստիկ տարաների և պոլիէտիլենային արկղերի առատությունը՝ տեսարան, որին ծանոթ է դեպի Բագրատաշեն ճանապարհորդաց մարդ:

Ձեռք բերված արդյունքներ:

1.Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգողը արաջարկություն է արել օրեսդրության մեջ կատարել փոփոխություն և հանրային լսումները կատարել որոշումների ընդունման վաղ փուլում մինչ հողատարածքների վաճարքը:

2.Ստեփանավանի Օրհուս կենտրոնը մեծ բացատրական և պրակտիկ աշխատանք է տանում քաղաքի և հարակից գյուղերի հանրության իրազեկման ` կենցաղային աղպի տարանջատման համար,, որից հետո օրգանական աղպից սովորեցնում ենք պատրաստել կոմպոստ, որը հանդիսանում է օրգանական պարարտանյութ և միաժամանակ պակասեցվում է աղպի քանակը: Այս առումով ունենք հաջողություն, դասընթացներից հետո մասնակիցների մեծ մասը կատարում աղպի տարանջատում և օրգանական աղպից ստանում է օրգանական պարարտանյութ՝ **կոմպոստ**:

Մասնակցում է հասարակական լուսամներին և տարածում դրանց ընթացքի, ինչպես նաև արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Կատարված գործողություններ,

Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգողը ակտիվորեն մասնակցել է հասարակական լուսամներին և տարածում դրանց ընթացքի, ինչպես նաև արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Փոքր **ՀԵԿ-երի** կառուցումը Ձորագետ գետի վրա, հանդիսանում է լուրջ խնդիր Ստեփանավանի համար: ՀԵԿ-երի կառուցումը նախատեսվում է Ձորագետի վրա, որը կբերի Ձորագետի սակավաջրության, չորացման, ֆաունայի և ֆլորայի վերացման: Այս բոլորը նախատեսվում է ըստ նախագծի Ձորագետի հանգստի գոտում` Զքնաղի վրա:

Ստեփանավանի Օրհուս կենտրոնը ակտիվորեն մասնակցել է Ստեփանավանի ՓՀԵԿ-երի բոլոր հանրային լուսամներին, որտեղ հանրության կարծիքը երբեմն չի հետաքրքրում և շատ դեպքերում կատարվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության նորմերի խաղտումով, անտեսելով ՀՀ կողմից վավերացված բազմաթիվ կոնվենցիաների այդ թվում Օրհուսի կոնվենցիայի պահանջները: Հաշվի չի առնվել այլընտրանքային լուծումների հնարավորությունը, ինչը պահանջում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ ՕԲԵՆՔԻ 5-րդ հոդվածը: Մինչդեռ Ստեփանավանի զարգացման ուղղությունը տուրիզմն է, հանգստյան գոտիների ստեղծումը, և այս հատվածում ՀԵԿ-երի կառուցումը անհամաչափ վնաս է պատճառելու տնտեսությանը:

Ստեփանավանի Օրհուս կենտրոնը նամակ է ուղղել Լոռու մարզի գլխավոր դատախազ Շահբազյանին` օրենքով պահանջվող միջոցառումներ ձեռնարկելու պահանջով, Օրհուս կենտրոնի համակարգողը Ստեփանավանի հանրության կողմից Ձորագետի փրկության համար նամակով դիմել են ՀՀ նախագահ Ս.Սարգսյանին, ԱԺ պատգամավոր Կ.Կարապետյանին, ՀՀ Բնապահպանության նախարար Ա. Հարությունյանին, ՀՀ Լոռու մարզպետ Ա.Նալբանդյանին և Ստեփանավանի քաղաքապետ Մ.Ղարաքեչիշյանին:

Ձեռք բերված արդյունքներ:

Պատասխանները հուսալի չեն, սակայն հանրությունը իր պահանջներն է ներկայացրել և կվերահսկի /եթե շինարարություն լինի յուրաքանչյուր քայլը, պահանջելով ապահովելու հանրության պահանջները: /

ՆՊԱՏԱԿ 4

Կազմակերպում է հասարակայնության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը նպաստող միջոցառումներ (համայնքի տարածքում առկա բնապահպանական խնդիրների վերհանման ու համատեղ ուժերով դրանց լուծումներ տալու վերաբերյալ քննարկումներ, շարաթորյակներ և այլն):

Կատարված գործողություններ,

Ստեփանավանի Օրհուս կենտրոնը կազմակերպում է հասարակայնության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը նպաստող միջոցառումներ:

Ստեփանավանի Օրհուս կենտրոնում կազմակերպվել է հանդիպումներ ակտիվիստների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ, որտեղ արաջարկվել է համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով իրականացնել բազմաբնույթ բնապահպանական ծրագրեր, պարբերաբար կազմակերպել Ձորագետի մոնիթորինգ և առափնյա մաքրման աշխատանքներ, անտառների մոնիթորինգ, էկոիրազեկման դասընթացներ, ծառատունկ, կանգնել բոլոր այն նախաձեռնությունների կողքին, որոնք ուղղված են շրջակա միջավայրի առողջացմանը: Մասնակիցներն արաջարկեցին ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել Ձորագետը՝ արագ արձագանքելով Արմանիսի հանքի թափոններով գետի աղտոտման դեպքերին:

Ձեռք բերված արդյունքներ:

Տարիներ շարունակ Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքի տնօրինությունը չէր մասնակցում Օրհուս կենտրոնում կազմակերպված հասարակական քննարկումներին տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: `

1.Վերջապես հանրության ձայնը լսելի դարձավ. հաջողվեց կապ ստեղծել Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքի «Սագամար»ՓԲԸ-ի ընկերության նոր տնօրինության ներկայացուցիչների հետ:

Ավելին, Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքի նոր տնօրինությունը սկսել է մասնակցել Ստեփանավանի Օրհուս կենտրոնում կազմակերպված հանդիպումներին և«Սագամար» ՓԲԸ-ի անվտանգության պետ Ա. Բերբերյանը իր ելույթում ներկայացրեց Արմանիսի հանքավայրի անվտանգության ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները և հանքավայրի շահագործման արդյունքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ ավելացնելով, որ ընկերության նոր տնօրինությունը պարտավորվում է աշխատել առանց բնապահպանական աղտոտումների և պատրաստ է աշխատանքները հանքում կազմակերպել այնպես, որ շրջակա միջավայրին հասցվող վնասները նվազագույնի հասնեն:

Ստեփանավանի Օրհուս կենտրոնը տարվա ընթացքում կազմակերպել է շաբաթօրյակներ, ծառատունկեր, որին մասնակցել են ներկայացուցիչներ քաղաքապետարանից, ՀԿ-ներից, կրթական օջախներից, ակտիվիստներ:

Ստեփանավանի Օրհուս կենտրոնը կազմակերպել է Էկոլոգիական սեմինարներ, որոնց մասնակցել են ուսանողներ, դասախոսներ, աշակերտներ, Էկոակտիվիստներ, ներկայացուցիչներ տեղական ինքնակառավարման մարմիններից:

.2013թ. Ստեփանավանը ճանաչվեց Հանրապետության լավագույն կանաչապատ քաղաք:

Հաշվի առնելով այս ամենը , ինչպես նաև կենտրոնի հետ ու հասարակական կառույցների հետ համագործակցության պատրաստակամությունը ` Ստեփանավանի Օրհուս կենտրոնը շնորհակալագիր է հանձնել քաղաքապետ Մ.Ղարաբեշիշյանին:

ՆՊԱՏԱԿ 5

Շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պատասխանատու վարքագծի ձևավորան գործընթացին խթանելու նպատակով՝ համայնքների բնակչության և համայնքային կազմակերպությունների համար կազմակերպում և անցկացնում է Էկոկրթական դասընթացներ:

կատարված գործողություններ,

Ստեփանավանի Օրհուս կենտրոնը շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պատասխանատու վարքագծի ձևավորան գործընթացին խթանելու նպատակով՝ համայնքների բնակչության և համայնքային կազմակերպությունների համար կազմակերպում և անցկացնում է էկոկրթական դասընթացներ:

Հայաստանի Հանրապետությունում բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու՝ մարդու սահմանադրական իրավունքի եւ կարեւորագույն պետական խնդրի՝ էկոլոգիական ապահովման նպատակով շրջակա բնական միջավայրի պահպանության գործում յուրաքանչյուրի սահմանադրական պարտականությունների իրականացումը պահանջում է քաղաքացիների էկոլոգիական բարձր կուլտուրա, որը ձեռք է բերվում էկոլոգիական անընդմեջ կրթության ընթացքում:

Ստեփանավանի Օրհուս կենտրոնը կարևորում է էկոլոգիական կրթությունը և դաստյարակությունը սկսել մատաղ սերնդի մոտ վաղ հասակում: Այդ առումով Ստեփանավանի Օրհուս կենտրոնը էկո դաստյարակության դասընթացներ կատարում է համայնքներում տարբեր ուսումնական հաստատություններում՝ դպրոցականների համար, ուսանողների համար, էկոակտիվիստների համար:

Ստեփանավանի Օրհուս կենտրոնը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին հիմնավոր տեղեկություններ ու գիտելիքներ հաղորդելու նպատակով պարբերաբար կենտրոնում և կրթական օջախներում կազմակերպում և անց է կացնում էկոկրթական դասընթացներ, քննարկումներ տարածաշրջանի գերակա էկոլոգիական խնդիրների վերաբերյալ, սովորեցնելով սիրել և պահպանել շրջակա միջավայրը: Հանդիպումների ժամանակ համակարգողը մասնակիցներին ծանոթացնում է էկոլոգիական իրավունքներին, բացատրելով, որ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ապրելու շրջակա միջավայրում , որը բարենպաստ է նրա առողջության և բարեկեցության համար: Համակարգողը մասնակիցների հետ միասին ձևավորում է բնապահպանական կոչեր՝

<Ամեն մարդ, ամեն տարի, մեկ ծառ տնկի, խնամի>,

< Երբ արթնանում ես կարգի բեր քո մոլորակը>

<Անտառը ազգային հարստություն է>

<Չաղտոտել գետը>

և այլն.....

Ձեռք բերված արդյունքներ:

..Համայնքներում էկոկրթական դասընթացների արդյունքում ստեղծվել է **<Երիտասարդ էկոակտիվիստների նախաձեռնող խումբ>**, որը Օրհուս կենտրոնի հետ և հանդես է գալիս էկոլոգիական նախաձեռնություններով:

3.Հանդիպումների ժամանակ մասնակիցների հետ միասին համակարգողը կատարել է յուրաքանչյուր համայնքի **էկոլոգիական խնդիրների վերլուծություն**

Համայնքներում, Էկո կրթական հանդիպումների արդյունքում, պարզվել է Ստեփանավան քաղաքի և հարակից համայնքների գերակա Էկոլոգիական խնդիրները, որոնց ուղղությամբ էլ պետք է աշխատել հետագայում:

Ստեփանառան քաղաքի և հարակից տարածքների բնապահպանական գերակա խնդիրները

1.Ստեփանառան քաղաքի Արմանիս թաղամասի ոսկու-բազմամետաղանոց հանքավայրի շահագործումը “Մագամար” ՓԲԸ-ի կողմից, բնապահպանական նորմերի անտեսումը, տեղեկատվության սահմանափակումը, հարակից տարածքների և տնային տնտեսությունների սեփականության իրավունքի ոտնահարումը:

2.Փոքր ՀԵԿ-երի կառուցման խնդիրը Ջորագետ գետի վրա, տուրիզմի զոնայի վերացումը , հանդիսանում է լուրջ խնդիր Ստեփանավանի համար:

3.Ստեփանառանի և հարակից գյուղերի **աղբահանության խնդիրը:** Կենցաղային և արտադրական աղբը արդեն շուրջ 60 տարի թափվում է Ջորագետի մեջ:

4.Ստեփանավանի **անտառների պահպանության** / ոչնչացման խնդիրը: Այս խնդրի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ եթե նախկինում ծառահատումները մեծամասամբ կատարվում էին տեղի բնակչության կողմից և նախաձեռնությամբ և հիմանկանում ջեռուցման համար, ապա վերջին տարիներին այն կատարվում է կազմակերպված և ուղղորդված՝ սովորաբար մի քանի մեքենաներով է բեռզինե սղոցներով զինված ու կարճ ժամանակում մեծ քանակությամբ ծառահատման եղանակով:

5.**Որսագողությունը՝** անօրինական, ինչպես նաև էքստենսիվ որսորդությունը, որը անդառնալի վնաս է հասցնում տեղական ֆաունային:

6.Տեխնիկական արգելվաց միջոցների կիրառմամբ **ձկնգողությունը** /հոսանքահարման և խլորացման միջոցով/:

5. **Հանրային բնապահպանական իրազեկության պակասը**, որը հանդիսանում է նաև հանրային իրազեկության պակասի տարր:

6.Ստեփանավանի հարևանությամբ գտնվող **Մղարթի և Կողեսի ոսկու հանքավայրերի՝** բաց եղանակով շահագործումը Մուլտի Գրուպ ընկերության կողմից: Բնապահպանական վնասը կայանում է հանքավայրի բաց եղանակով շահագործման, , լանդշաֆտի փոփոխման և հողերի աննախադեպ երոզիայի առաջացմամբ: Չեն կատարվել հանրային լուսմներ մինչ հանքավայրի շահագործումը, ինչը հանդիսանում է ՀՀ Ընդերքի մասին շահագործման օրենքի կոպիտ խաղաղում:

7.Ստեփանավան և Տաշիր քաղաքների միջև տեղակայված մոտ **լճերի պահպանության** խնդիրը: Այդ լճերը ոչ միայն հանդիսանում են անօրինական որսորդության հայտնի վայրերը, այլև ենթարկվում են աղտոտման, /հակասում է Ռոտերդամի կոնվենցիային,ստորագրված ՀՀ կողմից/, տնտեսական գործունեության, ուստի խիստ կարիք ունեն պետական պահպանության:

8.Վայրի և **հազվագյուտ ծաղիկների** և բույսերի մեծաքանակ հավաքումը, որը հաճախ կատարվում է անգրագետ եղանակով՝ վնասելով բուսերի վերականգնումը:

ԼՊՍՏԱԿ 6

Կազմակերպում է Կենտրոնի ամենօրյա աշխատանքները, ապահովում է Կենտրոնի գույքի նպատակային օգտագործումն և պահպանումը: Կազմում, անհրաժեշտության դեպքում նաև լրամշակում և ներկայացում է Կենտրոնի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը, կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններն ու ֆինանսական փաստաթղթերը: կատարված գործողություններ.

Ստեփանավանի Օրինու Կենտրոնը Կազմակերպում է Կենտրոնի ամենօրյա աշխատանքները, ապահովում է Կենտրոնի գույքի նպատակային օգտագործումն և պահպանումը: Կազմում, անհրաժեշտության դեպքում նաև լրամշակում և ներկայացում է Կենտրոնի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը, կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններն ու ֆինանսական փաստաթղթերը:

Նշենք, որ Ստեփանավանի Օրինու կենտրոնը ունի ժամանակակից կահավորում և անհրաժեշտ տեխնիկա: Հաշվետու ժամանակաշրջանում ԵԱՀԿ գրասենյակի աջակցությամբ կատարվել է տեխնիկական միջոցների համալրում` ստացել ենք նոր համակարգիչ և ֆոտոխցիկ: Կենտրոնի բոլոր տեխնիկական միջոցները նորմալ աշխատում են, որոնցով նաև տարբեր ծառայություններ են տրամադրվում կամավորներին, ՀԿ-ների ներկայացուցիչներին, էկոակտիվիստներին:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի համակարգողի կողմից իրականացվել է կենտրոնի գրադարանի, ֆիլմոդարանի նյութերի համալրում: Տարվա ընթացքում կենտրոնի տարածքը տրամադրվել է ՀԿ-ների տարաբնույթ միջոցառումներ անցկացնելու նպատակով / թվով` 10 անգամ /:

Ձեռք բերված արդյունքներ:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ձեռնարկած քայլերը նպաստել են հասարակայնության շրջանում կենտրոնի նկատմամբ վստահության ձևավորմանը : Տարվա ընթացքում Ստեփանավանի Օրինու կենտրոնի կամավորների և էկոակտիվիստների քանակը ավելացել է 20%-ով, որի արդյունքում ստեղծվել է< **Երիտասարդ էկոակտիվիստների նախաձեռնող խումբ**>:

7. Օրագրով ձեռք բերված փաստացի արդյունքներ, քաղած դասեր և եզրակացություններ Ստեփանավանի Օրինու կենտրոնի 2013 թվականի հաջողությունները:

-

Հաշվետու ժամանակաշրջանում Ստեփանավանի Օրինու կենտրոնի կողմից հայտնաբերվեց ավելի քան մեկ տարի ավել թափված Արմանիսի դպրոցի բակում մկնդեղով և ծանր մետաղներով լի մեծածավալ թունավոր հանքաթափոններ, թափված Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքավայրի կողմից: Կենտրոնը պարզեց նաև, որ այդ թափոնները Արմանիսի դպրոցի բակ են բերվել «Սագամար» ՓԲԸ-ի կողմից` խաղահրապարակ կառուցելու նպատակով: Ճիշտ է խաղահրապարակ չէր կառուցվել, բայց թունավոր թափոնակույտերը «հիանալի» խաղատեղի էին դարձել երեխաների համար բավականին տևական ժամանակ

Խնդրի լուծման ակնկալիքով և հանրության պահանջով՝ Ստեփանավանի Օրհուս կենտրոնը բազմիցս ներկայացրել է սուր իրավիճակը տարբեր լրատվամիջոցներով, դիմել պատկան մարմիններին Օրհուս կենտրոնը հանրության կողմից պահանջով նամակներ է ուղղել քաղաքապետին, մարզպետին, բնապահպանական տեսչություն, Համաճարագային կենտրոն, «Սագամար» ՓԲԸ-ի տնօրինություն, հեռուստատեղերներ:

Վերջապես հանրության ձայնը լսելի դարձավ. հաջողվեց կապ ստեղծել «Սագամար» ընկերության նոր տնօրինության ներկայացուցիչների հետ: Արդյունքում Արմանիսի դպրոցի բակում կուտակված մկնդեղով և ծանր մետաղներով լի հանքաթափոնները հեռացվեցին:

Այժմ դպրոցի բակը մաքրված է և սևահողով է լցված:

Ավելին, Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքի նոր տնօրինությունը նպատակ ունի թափոններից ազատված դպրոցի բակում երեխաների համար կառուցել խաղահրապարակ, որի համար նախատեսված տարածքի եզրում էլ հենց սեպտեմբերի 3-ին 20013-2014 ուսումնական տարվա սկզբին **կատարվեց ծառատունկ**: Ծառատունկի նախաձեռնողներն էին Ստեփանավանի Օրհուս կենտրոնը և Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքը շահագործող «Սագամար» ՓԲԸ-ի տնօրինությունը: Ծառատունկն իրականացվեց դպրոցի աշակերտների և ուսուցիչների համատեղ ուժերով:

Նշենք, որ տարիներ շարունակ չէր հաջողվում կապ ստեղծել «Սագամար» ՓԲԸ-ի նախկին տնօրինության հետ:

Այժմ «Սագամար» ՓԲԸ-ընկերության նոր տնօրինությունը պարտավորվել է է աշխատել առանց բնապահպանական աղտոտումների և պատրաստ է աշխատանքները հանքում կազմակերպել այնպես, որ շրջակա միջավայրին հասցվող վնասները նվազագույնի հասնեն:

2.Համայնքներում էկոլոգիական դասընթացների արդյունքում ստեղծվել է **<Երիտասարդ էկոակտիվիստների նախաձեռնող խումբ>**, որը Օրհուս կենտրոնի հետ և հանդես է գալիս նոր բնապահպանական նախաձեռնություններով:

3.2013թ. Ստեփանավանը ճանաչվեց Հանրապետության լավագույն կանաչապատ քաղաք:

8.Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրի շրջանակներում ի հայտ եկած դժվարությունները և նոր լուծումները:

Ստեփանավանի Օրհուս կենտրոնը հաշվետու ժամանակաշրջանում ծրագրի իրականացման ընթացքում հանդիպել է որոշակի դժվարություններից: Օրինակ Արմանիսում հանքավայրի շահագործման արդյունքում կոպտորեն ոտնահարվում են տեղի բնակչության իրավունքները, սակայն հասարակությունը տեղեկություն չունենալով վտանգների մասին , պաշտպանված չէ: Բնակիչները վախենում են բարձրաձայնել , պահանջել, / հատկապես հանքում աշխատողները/ հանքի տնօրինությունից <Սագամար> ՓԲԸ-ի ց , աշխատել պահպանելով բնապահպանական նորմերը:

Մեկ այլ օրինակ՝ Արմանիսի դպրոցի տնօրենը դիմել է Արմանիսի հանքի տնօրինությանը հող լցնել դպրոցի բակում հարթակ կառուցելու համար: <Սազամար> ՓԲԸ-ըն բերել , լցրել էմեծածավալ թունավոր հանքաթափոններ, սակայն դպրոցի տնօրինությունը տեղյակ չէր դրա վնասների մասին:

ՈՒստի քաղաքացիական ինքնագիտակցության բարձրացման և շահերի պաշպանության նպատակով անհապաղ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտություն կա:

Դժվարությունների ենք հանդիպել նաև լսումներին կապված Փոքր ՀԵԿ-երին շինարարության հետ: Քանի որ Ստեփանավանի քաղաքապետի կողմից այդ ՀԵԿ-երի շինարարությունը համար հողակտորների աճուրդով վաճառքը տեղի է ունեցել 2008թ., իսկ հասարակական լսումները իրականացվում են 2013 թվականին:

Անհրաժեշտ է ձեռնարկել կտրուկ քայլեր օրենսդրական դաշտում փոփոխություն կատարելու:

9. Ծրագրի գնահատում և շարունակականություն

Ստեփանավանի Օրհուս կենտրոնի գործունեությունը Արմանիսի ոսկու բազմամետաղանոց հանքավայրի ուղղությամբ, Փոքր ՀԵԿ-երի կառուցման խնդիրը Ձորագետի հանգստավայրում **համահունչ է ԵԱՀԿ** «Համայնքային անվտանգություն» նախաձեռնությունից բխող ծրագրին, որի հիմնական նպատակն է իրականացնել աշխատանքներ ներառելով ոչ միայն շրջակա միջավայրի հետ անմիջական առնչություն ունեցող, այլև սոցիալական, առողջապահական, արտադրական անվտանգության, կրթական ու համայնքային անվտանգությունն անուղղակիորեն խոչընդոտող այլ հարցեր :

Ստեփանավանի Օրհուս բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնը շարունակելու է աշխատանքը , պարբերաբար կատարելով Ձորագետ գետի մոնիթորիգ, թույլ չտալու <Սազամար> ՓԲԸ-ին հանքաթափոնների կուտակումներ արաջացնել Ձորագետում, աղտոտել շրջակա միջավայրը, խաղտել բնապահպանական նորմերը:

Ավելին Ստեփանավանի Օրհուս կենտրոնը անընդհատ կաշխատի հանրության հետ բարձրացնելով քաղաքացիական հասարակության ինքնագիտակցությունը և շահերի պաշպանությունը:

Օրհուս կենտրոնը կաշխատի Ստեփանավանի գերակա էկոլոգիական խնդիրների ուղղությամբ:

Կենտրոնի համակարգող՝ Մանյա Մելիքջանյան

E:mail : manya_lore@yahoo.com

Հեռ: 093 315108